

նադրած էր Ոնոփրիոս անուն մէկը, որ յառաջ Խաչքօ կը կոչուէր: Նորընծայ արեղան իւր քառասունքի առաջին տասներկու օրերը հազիւ իւր ետեւն ունէր, երբ հրաման ընդունեցաւ եպիսկոպոսէն մատուցանել իւր առաջին պատարագը: Կը հրաւիրուի պատարագին ներկայ ըլլալու նաեւ Գրիգոր Կեսարացի: Բայց նա կը հրաժարի հրաւերէն, յայտարարարելով թէ հայ եկեղեցւոյ կանոններու հակառակ է քառասունքը լրանալէ յառաջ պատարագելը: Եպիսկոպոսը կը լռէ. պատարագը կը յետաձգուի: Յաջորդ կիրակի միւսանգամ հրամայեց նորընծային ելլել պատարագի: Քառասունքը չէր աւարտած: Եւ որպէս զի զգալ տայ Վարդապետին, թէ կը գտնուի օտար թեմի մէջ, ուր չունի իրաւունք թեմականին գործերու մէջ խառնուելու, անխոհմարար զնաց առաւօտ կանուխ եւ փակեց այն եկեղեցւոյն դուռը, ուր իջեւանած էր Վարդապետը, եւ բանալին առաւ հետը: Ասկէ բնականաբար «յոյժ վշտացաւ Վարդապետն»¹² եւ գրգռուած՝

Յանդիմանեաց զնա յատենին .
 Վասն է՞ր քակես դու զկարգն հային,
 Ունին չզնես դու կանոնքին,
 Խախտիչ եղեր մեր սահմանին,
 Հարցէ զքեզ օձն անջրրդին¹³ :

Եւ, ինչպէս Դաւրիժեցի կը գրէ, յայտարար-

¹² Դաւրիժեցի, էջ 368:

¹³ Վիպասանութիւն, էջ 205: